

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ, ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍԱՀՈՒՂԻՆԵՐԻ, ՍԱՌՑԱԴԱՇՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում կա 34 մարզադաշտ՝ հիմնականում ֆուտբոլային: Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը, «Հրազդան» մարզադաշտը և «Միկա» ֆուտբոլային ակումբի մարզադաշտը համապատասխանում են միջազգային չափանիշներին, և մարզադաշտերի վիճակը տարվա ընթացքում բարելավվում է:

Լեռնադահուկային սահուղիները հանրապետությունում գործում են Ծաղկաձոր և Ջերմուկ քաղաքներում: Ծաղկաձորում գործում է հինգ սահուղի, որոնցից երկուսն ունեն միջազգային գրանցում, իսկ երեքը՝ սիրողական են: Ջերմուկում գործում է երկու սահուղի, որոնք առայժմ չունեն միջազգային գրանցում, սակայն դրանց վիճակը տարեցտարի բարելավվում է:

Սահադաշտեր հանրապետությունում երեքն են, որոնք գործում են Իրինա Ռոդնինայի անվան մարզադպրոցում, Կարեն Դեմիրճյանի անվան մարզամշակութային համալիրում և Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի հարակից տարածքում: Վերջին երկու սահադաշտերը սիրողական են և սեզոնային:

22 հունվար, 2016 թ.